ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հոկտեմբերի 02-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/51»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ցանցային բաժանարարների և դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/51» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 01.10.2020թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 02.10.2020թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«Հրավերով ապրանքների մատակարաման ժամկետ է սահմանված Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օրը: Հրավերում առկա պայմանագրի նախագծի 8,8 կետով նախատեսվում է մատակարաման ժամկետի երկարացման հնարավորություն մինչև 30 օրով: Ո՞ր դեպքում կմերժվի մատակարարման ժամկետի երկարացումը, բացի նշված կետում նախատեսված պայմանից, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Եթե մերժվի մատակարաման ժամկետի երկարացումը, ապա ի՞նչ հետևանք դա կարող է ունենալ մատակարարի համար:»

Պարզաբանում

Դատական դեպարտամենտի կարիքների համար ցանցային բաժանարարների և դյուրակիր համակարգիչների մատակարարման ժամկետը սահմանվել է՝ ելնելով գնման անհրաժեշտությունից՝ պահպանելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը.» պարբերությամբ սահմանված պահանջները:

Հրավերում ներառված պայմանագրի նախագծով սահմանված կարգավորումների շրջանակում՝ Գնորդի կողմից պայմանագրի գնման առարկա հանդիսացող ապրանքների մատակարաման ժամկետի երկարաձգման անհրաժեշտության հարցը կդիտարկվի պայմանագրի կատարման փուլում, մատակարարի կողմից պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքների մատակարարման անհնարինության վերաբերյալ հիմնավոր փաստարկների ներկայացման դեպքում: Միաժամանակ մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում չկատարման դեպքում կիրառելի են պայմանագրով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները, որոնք ներառված են նաև քննարկվող գնման ընթացակարգի հրավերում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/51» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/51» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: